ԱՌԱՋԱԲԱՆ

Հայաստանի անտիկ շրջանի նյութական մշակույթի ուսումնասիրման համար բացառիկ նշանակություն ունեն Արտաշատի պեղումները, որոնք ձեռնարկվել են 1970 թ. ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից (արշավախմբի պետ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյան) և շարունակվում են մինչև այսօր։

Արտաշատը հիմնադրել է Արտաշես I-ը մ. թ. ա. II դարի 80—70-ական թվականներին. կործանվել է 368 թվականին Շապուհ II-ի արշավանքի ժամանակ։ Սակայն սահմանափակ ձևով իր գոյությունը շարունակել է մինչև VIII դարը։

Արտաշատի բլուրների (I, II, VII, VIII) պեղումների շնորհիվ հայտնաբերվել են քաղաքի հիմնադրման օրից մինչև նրա կործանման ժամանակներին վերաբերող նյութական մնացորդներ։

Պեղումների արդյունքներին վերաբերող հոդվածներ՝ և գիտամասսայական բնույթի գրքույկ արդեն հրապարակված են։ Պատրաստվում են հրատարակության Արտաշատի I. բլրի պեղումների արդյունքները։ Ներկա ուսումնասիրությունն ամփոփում է Արտաշատի տարածքում գտնվող դամբարանների պեղումների արդյունքները։

Անտիկ դարաշրջանի դամբարաններ հայտնաբերվեցին, պատահաբար, Նոր կյանք և Շիրազ գյուղերի դաշտերի թմբերը հարթեցնելիս, Հին Արտաշատ քաղաքի արևելյան և հարավարևելյան կողմերում։

Արտաշատի հնագիտական արշավախմբի մի ջոկատ, հնագետներ Ժ. Դ. Խաչատրյանի (ջոկատի պետ), Ա. Ա. Քալանթարյանի և ճարտարապետ Ա. Գ. Կանեցյանի մասնակցությամբ, 1971 թ. պեղումներ կատարեց այդ դամբարանադաշտերում։ Արտաշատի բլուրների արևմտյան կողմում նույնպես հայտնաբերվեց դամբարանադաշտ, որը պեղել է տողերիս հեղինակը, իսկ բլուրների վրա և քաղաքի տարածքում տարբեր տարիներին բացված առանձին դամբարաններ պեղել են արշավախմբի պետ Բ. Ն. Առաքելյանը և Ֆ. Ի. Տեր-Մարտիրոսովը։

---

[1] *Б. Н. Аракелян,* Основные результаты раскопок древнего Арташата в 1970—1973 годах, ИФЖ, 1974, № 4, նույնի, *Հին Արտաշատ, Երևան, 1975,* Ժ. Դ. Խաչատրյան, Ա. Գ. Կանեցյան, *Արտաշատի VIII բլրի շերտագրությունը, ԼՀԳ, 1974, № 9,* Ժ. Դ. Խաչատրյան, *Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան, ԼՀԳ, 1977, № 5, էջ 37—60,* նույնի, *Ուշ հելլենիստական շրջանի ազնվի դամբարան, ԼՀԳ, 1977, № 1, էջ 55—63 և այլն։*